ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

18.10.2013թ.
210-ի 8

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Մեզ են դիմել Բաբաջանյան 18 շենքի (Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան) բնակիչները՝ խնդրելով իրենց օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: Բաբաջանյան 18 շենքից մի քանի մետր հեռավորության վրա իրականացվում է շինարարություն, որը, ըստ "Մուշ" համատիրության, ապօրինի է: Նշենք, որ շինարարության տարածքում կան ծառեր, որոնք որ շինարարությունը շարունակելու կարող են հատվել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Եթե Բաբաջանյան 18 շենքի հարեւանությամբ իրականացվող շինարարությունն ապօրինի է, ապա խնդրում ենք ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ շինարարությունը դադարեցնելու համար,
2. Եթե Բաբաջանյան 18 շենքի հարեւանությամբ իրականացվող շինարարությունն ապօրինի չէ, ապա խնդրում ենք հայտնել ե՞րբ, ի՞նչ իրավական ակտով, որքա՞ն մակերեսով, ու՞մ, ի՞նչ նպատակով, ի՞նչ իրավունքով (սեփականության իրավունքով, վարձակալության իրավունքով) եւ որքա՞ն ժամկետով է տրամադրվել Բաբաջանյան 18 շենքի հարեւանությամբ իրականացվող շինարարության տարածքը,
3. Ե՞րբ է տրվել վերոնշյալ տարածքում շինարարության թույլտվությունը եւ ի՞նչ հիմքով,
4. Խնդրում ենք տրամադրել հողահատկացման, շինարարական թույլտվության եւ ճարտարապետահատակագծային առաջադրանքի պատճենները:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան